ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համայնք

21.01.2025թ.

2025 թվականի հունվարի 21-ին ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի վարչական շենքում, ժամը 12:30-ին՝ Քարաբերդ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում, ժամը 15:00-ին՝ Բազումի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցան «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնած հանրային լսումներ (քննարկումներ): Հանրային լսումը կազմակերպվում է ՀՀ Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքներում ստորև բերվող ծայրակետային կոորդինատներով սահմանափակված տեղամասերում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության նախատեսվող աշխատանքների վերաբերյալ:

1. X=4523843.0000, Y=8457898.0000, 2. X=4524458.9654, Y=8456966.3854,
3. X=4524300.6693, Y=8456056.1073, 4. X=4523665.9295, Y=8456308.7157,
5. X=4522818.7771, Y=8458015.7669, 6. X=4521504.8467, Y=8458658.6876,
7. X=4521395.7576, Y=8458802.8378, 8. X=4522613.0000, Y=8459068.0000,

և

1. X=4521349.8370, Y=8459456.9301, 2. X=4522345.7443, Y=8459813.8075,
3. X=4522035.6982, Y=8460679.0266, 4. X=4521801.8913, Y=8461114.0162,
5. X=4520856.0007, Y=8460585.8750

1. Փամբակ համայնքի Փամբակ բնակավայր.

Ս/թ. հունվարի 21-ին, ժամը 11:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի նիստերի դահլիճում /գ. Փամբակ 1 փող 23շ./ տեղի ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնած «Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրության» վերաբերյալ հանրային լսումը:

Մասնակցեցին՝

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Սամսոն Ուլիխանյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահան Զախարյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուռնաչյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը, «Ասսաթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի ավագանու անդամները, բնակիչները և «Քաղաքացու ձայն» CV media-ի ներկայացուցիչները (կից՝ մասնակիցների ցանկը, որը ներկա բնակիչների մեծամասնությունը ինչ-ինչ նկատառումներից ելնելով չստորագրեց և տեսաձայնագրությունը):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը.

- Հարգելի հյուրեր, բնակիչներ, ողջունում եմ բոլորիդ, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել, որպեսզի Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվության համար անցկացնի հանրային լսումներ: Կազմակերպությունը մեզ քաջ հայտնի է, այս պահին

գործունեություն է իրականացնում մեր մյուս բնակավայրում՝ Արջուտում, որտեղ ունի շահագործվող հանք և գործարան: Իրենց հետ մենք շատ լավ համագործակցում ենք, համայնքին բազմիցս աջակցել են: Նախատեսվող գործողության մասին ավելի մանրամասն և մասնագիտորեն կներկայացնեն կազմակերպության ներկայացուցիչները: Կխնդրեմ, որ քննարկումն անց կացվի առողջ երկխոսության մթնոլորտում, նախ լսենք ընկերության ներկայացուցիչներին, ապա նրանք կպատասխանեն ձեր բոլոր հարցերին:

Ելույթ ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուռնաչյանը.

-Բարև Ձեզ, ինչպես նշվեց՝ ընկերությունը պատրաստվում է ձեր համայնքի վարչական սահմաններում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Այս գործողությունը, օրենսդրության համաձայն, ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, որի համար էլ իրականացնում ենք մեր այսօրվա քննարկումը: Օրենսդրական փաթեթում երկրաբանական ուսումնասիրությունները դասակարգվում են բ կատեգորիայի գործունեություն: Ի՞նչ է դա նշանակում: Ընդհանրապես գործունեությունները դասվում են 2 կատեգորիայի ա և բ: Բ կատեգորիային գործունեությունները ավելի նվազ ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, քան օրինակ հանքարդյունաբերության գործունեությունը, որը դասվում է ա կատեգորիայի:

Մեր կողմից առաջարկվող երկրաբանական ուսումնասիրությունները լինելու են փոքր ծավալներով և կարճ ժամանակահատվածում: Իրականացվելու են հորատումների միջոցով, հողի վերին շերտը հանվելու է, վերցնելու ենք նմուշառուները և նույն օրվա մեջ իրականացվելու է հողի հետ լցման և հետևանքների վերականգնման աշխատանքներ՝ ընդհուպ խոտածածկի վերականգնման:

Հարց հնչեցրեց Փամբակ գյուղի բնակիչ Արսեն Գրիգորյանը.

- Ուսումնասիրությունից հետո գնալու եք շահագործման, ճի՞շտ է: Իսկ նախաձեռնությունից առաջ ուսումնասիրել ե՞ք թէ որտեղ եք հանքարդյունաբերության գործունեություն ծավալում, ինչե՞ր կան տարածքում, ինչ է ուզում գյուղի բնակիչը:

Պատասխանեց Զարուհի Զուռնաչյանը.

- Այո, եթե հայտնաբերվեն բավարար պաշարներ: Հիմա, այս փուլում դեռ շահագործման մասին խոսել չի կարելի, պետք է նախօրոք գնահատել պաշարները: Միգուցե դրանք այնքան քիչ են, որ հեռանկարային չէ արդյունահանությունը: Իսկ այսօրվա լսումները հենց դրա համար է կազմակերպված, որ լսենք բնակիչների կարծիքը:

Արսեն Գևորգյան.

- Մենք այսօր 8 միլիոն դոլարի ներդրում ենք արել, որ տուրիզմ բերենք, մարզը զարգացնենք, հյուրանոցային համալիր ենք կառուցել, ճոպանուղի պետք է կառուցենք, զբոսաշրջիկները չեն գա, եթե կից հանք է գործում:

Զարուհի Զուռնաչյանի մեջբերմանը, որ եթե պահանջեք շահագործողից իր գործունեությունն իրականացնի նորմերին, չափանիշներին համապատասխան, իրականացնի կանխարգելիչ միջոցառումներ, Արսեն և Արայիկ Գևորգյանները պնդեցին, որ հնարավոր չէ, մեկ ա տուրիզմը և հանքարդյունաբերությունը համատեղելի չեն և ընդհանրապես պետք է մարզում կրճատվի հանքարդյունաբերությունը և զարկ տրվի տուրիզմի զարգացմանը: Նշեցին, որ այս պահին իրենց հյուրանոցային տնտեսությունում աշխատում են մոտ 20 աշխատակից Փամբակ գյուղից:

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վ. Զախարյանը հավելեց, որ սխալ է հայտարարել, որ «մարզում հանքարդյունաբերությունը պետք է կրճատել», իրենք գործում են օրենքի շրջանակներում և օգտակար հանածոյի պաշարների գնահատման ուսումնասիրություն ցանկանում են իրականացնել օրենսդրության շրջանակներում:

Բնակիչները միահամուռ արձագանքեցին, որ այստեղ միայն հյուրանոցի հարցը չէ, այն տարածքներում, որտեղ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ն գործունեություն է ցանկանում իրականացնել, խոտհարքներ և արոտավայրեր են, դա հետագայում բացասաբար է անդրադառնալու թէ գյուղատնտեսության, թէ անասնապահության, թէ շրջակա միջավայրի վրա:

Տեղի ունեցան հարց և պատասխաններ, տարբեր ակնարկներ և մեջբերումներ, բնակիչների միահամուռ դեմ էին երկրաբանական ուսումնասիրությանը, քանի որ եթե հայտնաբերվի պաշար, մեկ է հանքարդյունաբերությանը դեմ են լինելու, ինչու կատարել մի գործողություն, որից բխող մեկ այլ գործողության դեմ են: Նույնիսկ բնակիչներից մեկը՝ Վրեժը, կատակեց.

- Այդ ուսումնասիրության համար նախատեսված գումարը տրամադրեք համայնքին, դրանով բարի գործ արած կլինեք:

Մեկ այլ բնակիչ նշեց, որ եթե երկրորդ քայլին դեմ ենք, ինչու առաջին քայլն անենք: Բնակիչները որոշեցին լքել լսումների դահլիճը և խնդրեցին արձանագրել, որ դեմ են ոչ միայն շահագործմանը, այլ ուսումնասիրության անցկացմանը ևս:

2. Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայր.

Ս/թ. հունվարի 21-ին, ժամը 12:30-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքի Քարաբերդ գյուղի վարչական ղեկավարի նստավայրում /գ. Քարաբերդ/ տեղի ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնած օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների վերաբերյալ հանրային լսումը:

Մասնակցեցին՝

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, Քարաբերդի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահան Զախարյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուռնաչյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը, «Ասսաթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, ինչպես նաև համայնքի բնակիչները և «Քաղաքացու ձայն» CV media-ի ներկայացուցիչները (կից՝ մասնակիցների ցանկը, որը ներկա բնակիչների մեծամասնությունը ինչ-ինչ նկատառումներից ելնելով չստորագրեց և տեսաձայնագրությունը):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը:

Նա ողջունեց բոլորին, շնորհակալություն հայտնեց լսմանը մասնակցելու համար, հակիրճ ներկայացրեց լսման բովանդակությունը և նշեց, որ լսումներն անց են կացվում ոչ թէ արդյունահանման, այլ պաշարների գնահատման համար, քանի որ պարզ չէ վերը նշված կոորդինատներով տարածքներում օգտակար հանածոների պաշարներ գոյություն ունեն, թէ ոչ: Խնդրեց բոլորին լռություն պահպանել, նախ լսել «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի

գործընկերներին, քանի որ մեզ հյուր են եկել, հետո նրանք կպատասխանեն բնակիչների հարցերին:

Ելույթ ունեցավ Քարաբերդի վարչական ղեկավար Յուրիկ Շավելյանը.

- Քանի որ բնակիչները շատ են հարցնում տարածքների մասին, կոորդինատներով չեն հասկանում, թէ որ տարածքների մասին է խոսքը, ես մեր տեղանքների անուններով ասեմ: Հիմիկվա հանքը որ կա, դրա արևելյան մասը Ամպակի գոմեն ենք ասում, հանքի մյուս կողմը Չայքոլի հանդամասից մինչև Բզովդալի /Բազումի/ սարերը՝ Ախմատաղի յալը:

Բնակիչներից մեկը արձագանքեց,

- ՈՒրեմն անասուն չպիտի պահենք էլի, մենք այդտեղից ենք խոտ հնձում, մի երկու անասուն ենք պահում, փաստորեն մեզ գյուղից հանում եք:

Յուրիկ Շավելյանը խնդրեց լռություն պահպանել, լսել ներկայացնողներին, թէ ինչ են ուզում նախաձեռնել, հետո կարտահայտեն իրենց դժգոհությունները կամ կներկայացնեն առաջարկներ: Նա նշեց, որ կարգը խախտողներին և խանգարողներին դուրս կհրավիրի:

Խոսքը տրվեց Զարուհի Զուռնաչյանին: Նա նշեց, որ իրենց կողմից ձեռնարկվող գործողություններն իրականացվում են ՀՀ օրենսդրության շրջանակներում և ներկայացրեց նույնաբովանդակ տեղեկատվություն, ինչպես որ ներկայացրել էր Փամբակի համայնքապետարանում կայացված լսմանը: Հավելեց նաև, որ ուսումնասիրությունից հետո միայն պարզ կլինի հանքավայր կդառնա՞ թէ ոչ, կգտնվե՞ն պաշարներ, կամ ո՞վ հետագայում այն կշահագործի: Լսումներից հետո հաջորդ քայլը ավագանու քննարկմանը ներկայացնելն է, եթե կլինի նախնական համաձայնություն, կանցնենք նախագծման փուլին, եթե կլինի անհամաձայնություն, պետք է ներկայացվի հիմնավորում անհամաձայնություն հայտնելու վերաբերյալ, որը պետք է բացառապես հիմնավորի թէ ինչ բնապահպանական ռիսկեր կարող է ունենալ երկրաբանական ուսումնասիրությունը:

Հարց հնչեցրեց համայնքի բնակիչ Գագիկ Շավելյանը.

- Մենք, որ էստեղ ապրում ենք, ապրանք ենք պահում, որիս հնարավորությունը ինչքան հերիքում է: Հիմա որ խոտհարքները փչացնում եք, մենք որտեղի՞ց պետք ա խոտ հնձենք, փաստորեն մեզ քոչացնում եք: Էդ որ սաղ ոսկու հանք դառնա, մենք ո՞նց պիտի խոտ հնձենք, անասուն պահենք:

Զարուհի Զուռնաչյանը պատասխանեց.

- ՈՒսումնասիրության փուլում խոտհարքներին ոչ մի վնաս չի տրվում, բացի դա ևս մեկ հանրային լսում պետք է անցկացվի, իսկ պաշարների հայտնաբերման դեպքում արդյունահանման գործողության վերաբերյալ նորից երկու հանրային լսում պետք է անցկացվի: Հիմա այսօր եկեք խոսենք միայն ուսումնասիրության, ոչ թէ արդյունահանման մասին:

Բնակիչ Սերժիկ Յարիբեկյանը ակնարկեց.

- Ուսումնասիրություն չենք ուզում, քանի որ շահագործում էլ չենք ուզում, ճիշտը չուսումնասիրելն է, ես խնդրում եմ, էդ տարածքներին ձեռք չտաք:

Բնակիչ Գառնիկ Հարությունյանը մեջբերեց.

- 50 տարվա վարձակալության պայմանագիր ունեմ ու իմ նման շատերը, էն տարածքները, որ Շավելյանը նշեց, իմ խոտհարքը հենց այդ տարածքում է ու ես դեմ եմ հանքի շահագործմանը:

Զարուհի Զուռնաչյանը նշեց.

- Հանքավայրեր կան, որ աշխատում են համայնքի տարածքում, հանքաքարը հանում են, տանում ուրիշ տեղ մշակում: Ամբողջ գոյացած հարկը, որ կոչվում է ռոյալթի, դա տերմին է, մուծվող հարկի տեսակ, վճարվում է այլ համայնքում: Ռոյալթիից պետությունը համայնքին է տրամադրում մասնաբաժին, որը ուղղվում է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը: Հիմա ավելի լավ չի լինի, որ հանքը գործի Ձեր համայնքում ու մասհանումներից Ձեր համայնքը, բնակավայրը օգտվի:

Վահան Զախարյանը հավելեց.

- Առիթ եմ ունեցել այստեղ մինչ այս մասնակցել հանրային լսման, որի ժամանակ դուք դեմ չեք եղել հանքարդյունաբերությանը: Ես ուզում եմ նշեմ, դուք էլ հասկանաք, որ կա օրենսդրությամբ սահմանված ընթացակարգ, որով գործունեություն իրականացնող կազմակերպության վճարած ռոյալթիի հարկից կարող է համայնքը գումար ստանալ և ուղղել սոցիալ-տնտեսական զարգացմանը, իսկ սոցիալական ծրագրերի իրականացումը հավելյան ծրագրեր են: Ինչու չօգտվեք երկուսից էլ: Նաև պետք է նշեմ, որ ուսումնասիրության ժամանակ բնությանը էական վնաս չի պատճառվում, այսինքն խոսք չկա այն մասին, որ ձեր տարածքները չեք կարող օգտագործել այնպես, ինչպես որ նախկինում եք օգտագործել: ՈՒսումնասիրությունը ի՞նչ է նշանակում, դա նպատակ չունի կանաչ խոտհարքները վերածել հանքի: Ճիշտ է նպատակը շահագործումն է, բայց դրանից առաջ և պետությանը, և համայնքին, և շահագործող կազմակերպությանը պետք է իմանալ, արդյո՞ք մենք մեր ընդերքում ունենք այդ հարստությունը:

Բնակիչները պատասխանեցին, որ հասկացան, բայց միևնույնն է, դեմ են ուսումնասիրությանը: Ակնարկին, որ «դեմ եք ուսումնասիրությա՞նը, թէ՞ այն իրականացնող կազմակերպությանը» պատասխանեցին, որ ոչ ոքի թույլ չեն տա ուսումնասիրություն կատարել:

Բնակիչները պնդեցին, որ դեմ են և մեծամասնությունը լքեցին լսումների սենյակը: Ներկա բնակիչներից մեկը շարունակեց.

- Ձեր մեքենաները այդ տարածքով են անցնում, հանքանյութ են տանում, մեկ ա փոշին նստելու ա անասնակերի վրա:

Պատասխանեց Զարուհի Զուռնաչյանը.

- Դուք պատկերացնում եք, որ շահագործումը, եթե հասնի շահագործման, իրականացվելու է Սովետական Միության 60-ականների ավտոմեքենաներո՞վ: Այդպես չէ, այժմյան տեխնոլոգիաները և տեխնիկաները բավականին թարմացված են, բոլորը զինված են արտաթորող միջոցներով, վտանգավոր նյութերի ֆիլտրներով՝ չեզոքացուցիչներով, բացի դա ջրցանման աշխատանքներ են իրականացվելու և մի շարք այլ պաշտպանիչ միջոցառումներ:

Համայնքի բնակիչ Վաչիկը միջամտեց.

- Հանքարդյունաբերությունը գուցե լավ բան է, բայց մենք շատ գեղեցիկ բնություն ունենք, ես առաջարկում եմ զբոսաշրջությունը զարգացնենք, ներդրումներ կատարենք տուրիզմը զարգացնելու համար:

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչները ցանկանում էին շարունակել լսումները, բայց բնակիչները չցանկացան լսել և դեմ արտահայտվելով դուրս եկան:

3. Փամբակ համայնքի Բազում բնակավայր.

Ս/թ. հունվարի 21-ին, ժամը 15:00-ին ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Բազումի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնած օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքների վերաբերյալ հանրային լսման վերջին հանդիպումը:

Մասնակցեցին՝

Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը, Բազում գյուղի վարչական ղեկավար Արթուր Ծատուրյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահան Զախարյանը, «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուռնաչյանը, «Գեոէկոնոմիկա» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն Ա. Բաղդասարյանը, Փամբակի համայնքապետարանի ներկայացուցիչները, Բազում գյուղի և Վանաձոր քաղաքի բնակիչները և «Քաղաքացու ձայն» CV media-ի ներկայացուցիչները (կից՝ մասնակիցների ցանկը և տեսաձայնագրությունը):

Զեկուցումներ՝

Բացման խոսքով հանդես եկավ Փամբակ համայնքի ղեկավար Սուրեն Կոստանդյանը.

Հարգելի ընկերներ, Բազում բնակավայրի բնակիչներ, ողջունում եմ բոլորիդ: Մեր հավաքվելու նպատակը հետևյալն է. «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել, որպեսզի Փամբակ համայնքի Փամբակ, Քարաբերդ և Բազում բնակավայրերի տարածքում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով նախատեսվող երկրաբանական ուսումնասիրությունների թույլտվության համար անցկացնի հանրային լսումներ: Կազմակերպությունը մեզ քաջ հայտնի է, այս պահին գործունեություն է իրականացնում մեր մյուս բնակավայրում՝ Արջուտում, որտեղ ունի շահագործվող հանք և գործարան: Իրենց հետ մենք շատ լավ համագործակցում ենք, համայնքին և Արջուտ գյուղին մշտապես աջակցում են: Հիմնադիրները հայեր են: Հիմա մեզ դիմել են, որ տվյալ տարածքներում երկրաբանական ուսումնասիրություն անց կացնեն: Նշեմ, որ լսումներն անց են կացվում պաշարների գնահատման համար, քանի որ պարզ չէ, վերը նշված կոորդինատներով տարածքներում օգտակար հանածոների պաշարներ գոյություն ունե՞ն, թէ՞ ոչ: Համաձայնություն ստանալու դեպքում կիրականացվի պաշարների գնահատում, դրանից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով կդիմեն արդյունահանման համար: Խնդրում եմ բոլորդ լռություն պահպանեք, նախ լսենք «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի գործընկերներին, դրանից հետո կպատասխանեն ձեզ անհանգստացնող հարցերին: Հուսով եմ կունենանք կառուցողական քննարկում:

Ելույթ ունեցավ «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատու Զարուհի Զուռնաչյանը.

- Բարև Ձեզ, համաձայն ՀՀ օրենսդրության այսօր կազմակերպվել է այս հանրային լսումը: Այսինքն, ինչպես նշվեց, ընկերությունը պատրաստվում է ձեր համայնքի վարչական սահմաններում իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, որպեսզի հասկանանք՝ արդյոք տվյալ տարածքները հետագայում որպես հանքավայր հեռանկարային է, թէ ոչ, կլինեն արդյունաբերական պաշարներ, թէ ոչ: Լսումներից առաջ, համաձայն օրենսդրության, հայտարարություն է տրվել «Առավոտ» օրաթերթում, ծանուցումը հրապարակվել է համայնքապետարանի պաշտոնական էջերում, պահպանելով օրենսդրական բոլոր նորմերը՝ այսօր միասին իրականացնում ենք այս հանրային

լսումները: ՈՒզում եմ տեղեկացնել, որ երկրաբանական ուսումնասիրությունը օրենսդրության համաձայն երթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Երկրաբանական ուսումնասիրությունները դասակարգվում են բ կատեգորիայի գործունեություն: Ի՞նչ է դա նշանակում: Ընդհանրապես գործունեությունները դասվում են 2 կատեգորիայի ա և բ: Բ կատեգորիային գործունեությունները ավելի նվազ ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, քան օրինակ հանքարդյունաբերության գործունեությունը, որը դասվում է ա կատեգորիայի:

Մեր կողմից առաջարկվող երկրաբանական ուսումնասիրությունները լինելու են փոքր ծավալներով և կարճ ժամանակահատվածում: Իրականացվելու են հորատումների միջոցով, հողի վերին շերտը հանվելու է, վերցնելու ենք նմուշառուները և նույն օրվա մեջ իրականացվելու է հողի հետ լցման և հետևանքների վերականգնման աշխատանքներ՝ ընդհուպ խոտածածկի վերականգնման:

Վարչական ղեկավարի և բնակիչների պահանջով ընկերության ներկայացուցիչները քարտեզի վրա ցույց տվեցին նախատեսվող գործողության տարածքները, քանի որ ներկայացված կոորդինատներով հստակ չէր, թէ որ տարածքներում են նախատեսվում ուսումնասիրություններ անցկացնել:

Բնակիչ Տիգրան Դավթյանը արձագանքեց, որ այդտեղ կան գյուղատնտեսական հողեր, իսկ ջրային ռեսուրսը շատ թույլ է, քիչ է և Վանաձորի ամբողջ «Ղշլաղ» թաղամասը օգտվում է այդ խորքային ջրերից:

Բնակիչ Սեյրան Հակոբյանի վրդովմունքին, որ հավաքվել եք իրար գլխի և ցածր եք խոսում, չի լսվում, բոլորը նստեցին իրենց տեղում, իսկ քննարկում իրականացնողները խոստացան բարձր խոսել, որպեսզի վերջում լսվի:

Համայնքի ղեկավարը իր խոսքում նշեց, որ Արջուտի հանքավայրը շահագործող կազմակերպությունը, որը համագործակցում է «Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի հետ, բարեխիղճ է, ժամանակին մուծում է ռոյալթի հարկատեսակը, որից պետությունը 2 % մասնաբաժին է հատկացնում համայնքին:

Հարց հնչեցվեց բնակչի կողմից.

- Կարող եք ասել, օրինակ Արջուտի հանքավայրում շաբաթական, կամ ամսվա կտրվածքով միջինը ինչքա՞ն ոսկի է հանվում, որ մենք էլ հասկանանք դրա 2 տոկոսը ինչքա՞ն է կազմում: Դա մեր համայնքին օգուտ է տալու, թէ էնքան է կազմում, որ տված վնասը հազիվ փոխհատուցվի:

«Կոմպոզիտ Մետալ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահան Զախարյանը մանրամասն բացատրեց ռոյալթիի առաջացման սկզբունքներն ու համայնքին տրամադրվող մասնաբաժնի ընթացակարգը, սակայն հստակ ինֆորմացիա չուներ, թէ ինչքան կարող է դա լինել /գումարային առումով/: Նա նշեց, որ դա կախված է նաև հանքի պաշարից:

Հարց հնչեցրեց Բազում գյուղի բնակիչ Տիգրան Դավթյանը.

- Ես ծրագիր ունեմ, ցանկանում եմ զբաղվել էկոտուրիզմով, ցանկանում եմ իմ երեխան առողջ մեծանա, մաքուր սնունդ ուտի: Ինչպե՞ս ենք մենք համագործակցելու: Տեղանքին շատ լավ ծանոթ եմ, այն տարածքը, որտեղ ուզում եք գործունեություն ծավալել, իմ տարածքին մոտ է և ես չեմ պատկերացնում հանքարդյունաբերությունը էկոտուրիզմի կողքին: Ես արտերկրից թողել եկել եմ, բերել եմ իմ երեխաներին, որ եստեղ էկոլոգիապես մաքուր միջավայրում ապրեն, առողջ սնվեն ու հայեցի դաստիարակվեն, բայց որ տեսնում եմ իմ բնությունը աղտոտում եք, ընդերքը փորփրում եք, կոնկրետ ես դեմ եմ, չեմ ուզում և՛

ուսումնասիրություն, և՛ արդյունահանում: Եկեք հանքարդյունաբերության փոխարեն բնապահպանական ծրագիր առաջարկեք, օրինակ ծատեր տնկեք, երկու ձեռքով կողմ կքվեարկեմ:

Բնակիչ Հարություն Հակոբյանը ևս նշեց, որ դեմ է և՛ ուսումնասիրությանը, և՛ արդյունահանմանը:

Գործողությանը դեմ արտահայտվեց նաև Երեմ Ծատուրյանը:

- Դուք արդեն իսկ գիտեք, ինֆորմացիա ունեք, որ պաշարներ կան այդ տարածքներում, այլապես գործընթացը չէիք սկսի: Հիմա որ ասում ենք արդյունահանմանը դեմ ենք լինելու, ինչու ուսումնասիրությանը կողմ լինենք, ի՞նչ իմաստ ունի գործընթացը սկսենք, եթե վերջում դեմ ենք լինելու: Այսքան հավաքնած մարդկանցից մեկը չկա, որ կողմ արտահայտվի: Ասում եք եկել ենք, որ ձեր կարծիքը լսենք, բոլորս դեմ ենք:

Տեղի ունեցան հարց և պատասխաններ, տարբեր ակնարկներ և մեջբերումներ, բնակիչները միահամուռ դեմ էին երկրաբանական ուսումնասիրությանը, քանի որ եթե հայտնաբերվի պաշար, մեկ է հանքարդյունաբերությանը դեմ են լինելու, ինչու կատարել մի գործողություն, որից բխող մեկ այլ գործողության դեմ են: Նշեցին նաև, որ այստեղ սերունդ է մեծանում և իրենք մտածում են իրենց երեխաների մասին:

- Ազնվաձորից եկող ջուրը կբերեմ փորձաքննության, չնայած առանց փորձաքննության էլ ջրի գույնից երևում է աղտոտվածության աստիճանը: Դա Արջուտի հանքի գործելուց հետո է եղել,- նշեց բնակիչներից մեկը:

Բուռն քննարկման ընթացքում համայնքի բնակիչները հայտնեցին իրենց անհամաձայնությունը:

Ս. Կոստանդյանը շնորհակալություն հայտնեց ներկաներից, հայտարարեց հանրային լսումներն ավարտված, տեղեկացրեց նաև, որ կկազմվի հանրային լսման արձանագրություն, որը հասանելի կլինի բոլորին, ինչից հետո հաշվի առնելով բոլորի կարծիքը՝ կտրվի որոշում: Նա ևս մեկ անգամ նշեց, որ հանրային լսումը կազմակերպվել է օրենքի շրջանակներում:

Հանրային

լսման վարող,

Փամբակ համայնքի ղեկավար Ս. Կոստանդյան

Հանրային լսման արձանագրող՝ Ռ. Մինասյան